

## ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է ՀՀ դրամի թողարկման 20-ամյակի կապակցությամբ կայացած ընդունելությանը

25.11.2013



2013 թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանի հրավերով Հայաստանի Ազգային պատկերասրահի Որմնանկարների դահլիճում մասնակցել է ՀՀ դրամի թողարկման 20-ամյակին և բանկային աշխատողի օրվա կապակցությամբ կազմակերպված ընդունելությանը: Ընդունելության շրջանակներում ՀՀ Ազգային արժույթի թողարկման 20-րդ տարեդարձի կապակցությամբ ՀՀ կենտրոնական բանկի (ԿԲ) կազմակերպած ցուցահանդես, որտեղ ներկայացել են 1994թ-ից մինչ այսօր ԿԲ-ի թողարկած բոլոր հուշադրամները: Ցուցահանդեսի շրջանակներում կայացել է նաև 2013թ. թողարկված <<Հայկական այբուբենի տառերը>> հուշադրամների շարքի շնորհանդեսը՝ հայկական տառերի ոսկե և արծաթե հուշադրամների հավաքածուի ներկայացմամբ: Այն համալրում է բանկի թողարկած <<Հայոց գրերի գյուտի 1600 ամյակին>>, <<Սահակ Ա Պարթևին>>, <<Վռամշապուհ արքային>> նվիրված հուշադրամների շարքը: